ԻՄՊԼԻԿԱՑԻԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լ. Գ. ԲՐՈՒՏՅԱՆ

Իմպլիկացիա տերմինը բազմանշանակ է. այն գործածվում է տրամաբանության, լեզվաբանության մեջ և, ի դեպ, ոչ միայն այդ գիտություններում։ Ընդ որում, այն տարիմաստ է ղրանցից յուրաքանչյուրի ներսում։ Ինչպես նշում է Ս. Դորոֆեևան, «այն փաստը, որ «իմպլիկացիա» տերմինը լեզվաբանական դրականության մեջ գործածվում է չափազանց լայն ու բավական անորոշ առումով, բացատրվում է, երևի թե, նրանով, որ այն պատկանում է միաժամանակ մի քանի գիտությունների (գրականագիտությանը, տրամաբանությանը, հոգեբանությանը, լեզվաբանությանը) և տարբեր բովանդակությամբ է լցվում, կախված այն բանից, թե գիտելիքների որ բնագավառի մասին է խոսքը»[1]։

I. Իմպլիկացիայի հասկացությունը տրամաբանության մեջ

1. Իմպլիկացիայի հասկացությունը դասական տրամաբանության մեջ։ *Տրամաբանության մեջ տարբերակվում են իմպլիկացիայի տարբեր տիպեր. դասական իմաստով հասկացվող իմպլիկացիա և ոչ-ավանդական իմպլիկացիա։ Դասական տրամաբանության շրջանակներում սահմանազատվում են* մատերիական իմպլիկացիան և ձևական իմպլիկացիան։ *Բ. Ռասելի մտցրած* մատերիական իմպլիկացիա *տերմինին հոմանիշ է թույլ իմպլիկացիան, իսկ տրամաբանական իմպլիկացիայի հոմանիշներն են* ձևական իմպլիկացիան, իլատիվ իմպլիկացիան *(վերջինս մտցվել է Լ. Ջիպմենի կողմից)։*

*Մատերիական իմպլիկացիան սահմանվում է հետևյալ կերպ. «եթե... ապա» տրամաբանական շաղկապը երկու դատողությունների այնպիսի կապ է, որոնց կազմած նոր պայմանական դատողությունը կեղծ է, երբ հիմքը ճշմարիտ է, իսկ հետևանքը՝ կեղծ, և որը կարող է ճշմարիտ լինել այն դեպքերում, երբ հիմքը և հետևանքը ճշմարիտ են, երբ հիմքը կեղծ է, իսկ հետևանքը՝ ճշմարիտ, և երբ հիմքը և հետևանքը կեղծ են։ Այդ տրամաբանական շաղկապը՝ «եթե A, ապա B», տրամաբանության մեջ անվանում են իմպլիկացիա, իսկ պայմանական դատողությունները՝ իմպլիկատիվ դատողություններ»[2]։ Նմանիմաստ սահմանում է տալիս Փ. Սուփեսը „If Mary loves John, then John Marv" *(«եթե Մերին սիրում է Ջոնին, ապա Ջոնը սիրում է Մերիին»)* ասույթի օրինակի հիման վրա. *պայմանական ասույթը կեղծ է, եթե նախորդող ասույթը ճշմարիտ է, իսկ հաջորդողը՝ կեղծ, հակառակ դեպքում այն ճշմարիտ է*[3]։ Փ. Սուփեսի նման մոտեցման դեպքում հաշվի են առնվում միայն ճշմարտացիության արժեքները, բայց ոչ բովանդակային կապը՝ ասույթի առանձին մասերի միջև։ *Ըստ Յու. Ջարնյակի, ասել, որ մարդուց (X) թխեցվում է մեղավոր, նշանակում է ասել, որ եթե X-ը մարդ է, ապա նա մեղավոր է։ Սակայն ըստ սահմանման, եթե X-ը մարդ չէ, ապա իմպլիկացիա պարունակող ասույթը ամբողջությամբ վերց-*

---

[1] С. М. Дорофеева, Специфика реализации импликации в тексте художественного произведения (Исследования по грамматике русского языка: Уч. зап. ЛГУ, Серия филологических наук, № 277, Л., 1959, вып. 55, с. 44).

[2] Д. П. Горский, Логика, М., 1963, с. 133.

[3] *Տե՛ս* P. Suppes, Introduction to Logic, New York, 1957, p. 6.

րած ճշմարիտ է համարվում, անկախ այն բանից, մեղավոր է X-ը, թե ոչ։ Իսկ կեղծ է միայն այն դեպքում, երբ նրա երկրորդ մասը (հետևանքը) կեղծ է, իսկ առաջին մասը (նախադրույթը)՝ ճշմարիտ, այսինքն՝ եթե X-ը մարդ է և X-ը մեղավոր չէ[4]։

Տրամաբանության բոլոր դասագրքերում բերվող քրեստոմատիական օրինակներով («Եթե $2 \cdot 2=4$, ապա Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է», «Եթե $2 \cdot 2=5$, ապա Երևանը Հայաստանի մայրաքաղաքը չէ» տիպի) ցույց է տրվում, որ մատերիական իմպլիկացիայի դեպքում հաշվի են առնվում ասույթի մասերի միջև եղած միայն ճշմարտացիության արժեքները, բայց ոչ բովանդակային կապը նրանց միջև, այսինքն, որ հաջորդող ասույթը իմաստային առումով չի բխում նախորդող ասույթից։ Եվ այստեղ առաջ են գալիս հանրահայտ «մատերիական իմպլիկացիայի պարադոքսները»։

Մատերիական իմպլիկացիա հասկացությունից տարբեր է **ձևական իմպլիկացիան**, որը ենթադրում է բովանդակային կապերի առկայությունը ասույթի առանձին մասերի միջև («Եթե շատ ծխես, ապա կարող ես հիվանդանալ» տիպի)։ Մեզ թվում է, որ ձևական իմպլիկացիա և մատերիական իմպլիկացիա արտահայտող ասույթների միջև եղած տարբերությունը հետևյալն է. եթե առաջին դեպքում իմպլիկացիան արտահայտվում է անմիջականորեն ասույթի միջոցով, ապա երկրորդ դեպքում՝ ասույթի ներկայացման մետալեզվական մակարդակով, որը մի կարգ ավելի հեռու է սկզբնական ասույթից։ Օրինակ, «Եթե $2 \cdot 2=4$, ապա Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է» ասույթն անմիջականորեն իմպլիկացիա չի պարունակում։ Այդ հարաբերությունն առաջանում է այն ժամանակ, երբ սկզբնական ասույթը թարգմանում ենք մետալեզվի. «Եթե ճշմարիտ է, որ $2 \cdot 2=4$ և ճշմարիտ է, որ Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է, ապա ասելով՝ «Եթե $2 \cdot 2=4$, ապա Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է», մենք արտասանում ենք մի ասույթ, որը ճշմարիտ է»։

2. **Իմպլիկացիայի տարատեսակները**: Իմպլիկացիայի տարատեսակներից է **տրամաբանական համարժեքությունը**: Փ. Սթրոուսոնն այն սահմանում է այսպես. երբ S_1-ից հետևում է S_2-ը, իսկ S_2-ից հետևում է S_1-ը, այն է՝ երբ S_1-ը և ոչ -S_2-ը հակասում են միմյանց[5]։

Տարբերակվում է նաև **կրկնաբանական իմպլիկացիան**: Ըստ Փ. Սուփեսի, P նախադասությունը կրկնաբանորեն ածանցում է Q նախադասությունը միայն այն դեպքում, երբ $P \longrightarrow Q$ պայմանական ասույթը կրկնաբանություն է։ Որպես օրինակ նա բերում է հետևյալ նախադասությունը. «Locke was a bachelor and Newton never married“ («Լոկը ամուրի էր, իսկ Նյուտոնը երբեք ամուսնացած չէր եղել»), որը կրկնաբանորեն ածանցում է “Newton never married“ («Նյուտոնը երբեք ամուսնացած չէր եղել»), քանի որ ցանկացած երկու P_1 և P_2 նախադասությունների համար մենք գիտենք, որ $P_1 \wedge P_2 \longrightarrow P_2$ նախադասությունը կրկնաբանություն է։ Եթե P-ն կրկնաբանորեն ածանցում է Q-ն, ապա երբ P-ն ճշմարիտ է, Q-ն էլ պետք է ճշմարիտ լինի։ Ճշմարիտ P-ից չի կարող ածանցվել կեղծ Q-ն[6]։

Կրկնաբանական իմպլիկացիայի հասկացությունից տարբերվում է **կրկնաբանական համարժեքությունը**: Երկու նախադասություն կրկնաբանորեն համարժեք են, եթե դրանք կրկնաբանորեն ածանցվում են մեկը մյուսից։ Կրկնաբանական համարժեքության հասկացությունն ավելի ուժեղ է, քան կրկնաբանական իմպլիկացիայի հասկացությունը։

---

[4] Ю. Чарняк, Умозаключения и знания (часть I) (Новое в зарубежной лингвистике, М., 1983, вып. 12, с. 178).

[5] Տե՛ս P. Strawson, Introduction to Logical Theory, London, New York, 1952, p. 25.

[6] Տե՛ս P. Suppes, նշվ. աշխ., էջ 15—16։

3. Իմպլիկացիայի ճասկացությունը ոչ-դասական տրամաբանության մեջ:

Դասական տրամաբանության շրջանակներում իմպլիկացիան հետազոտելիս առաջացող պարադոքսները կանգնեցրին իմպլիկացիայի նոր տեսության ստեղծման անհրաժեշտության առջև, այնպիսի տեսության, ուր կվերացվեին այդ պարադոքսները ծնող պատճառները։ Այդպիսին դարձավ խիստ իմպլիկացիայի տեսությունը, որն առաջարկեց Վ. Ակերմանը։ Նրա գաղափարները զարգացրին Ա. Անդերսոնը և Ն. Բելնապը, որոնք առաջարկեցին ոչ-եղանակավորող ռելեվանտ իմպլիկացիայի տեսությունը։ Դրանից առաջ Դ. Պրավիտցը գործածում էր ռելեվանտ իմպլիկացիա հասկացությունը։

Վերլուծելով տրամաբանական հետևման երևույթը, Ե. Սիդորենկոն արդարացիորեն նշում է, որ դասական մոտեցմանը հատուկ տրամաբանական հետևման զուտ էքստենսիոնալ ըմբռնման անհամարժեքությունը աչքի է զարնում։ Ռելեվանտ տրամաբանությունը (կամ ավելի լավ է ասել՝ ռելեվանտ տրամաբանությունները) առաջացել ու զարգացել է որպես բացասական վերաբերմունք նման ըմբռնման նկատմամբ, որը բավական ակնհայտ հակասում էր պատմական ավանդության ու դատողությունների իրական գործառույթին։ Հետևման դասական ըմբռնումը դժվարացնում կամ անգամ անհնար էր դարձնում մի շարք գործնական խնդիրների լուծումը, ինչպես, ասենք, ինտենսիոնալ տրամաբանական կապերի և հարաբերությունների նկարագրությունն ու տրամաբանական արտակայումը։ Ե. Սիդորենկոն նշում է. դասական և ռելեվանտ տրամաբանությունների տարբերությունն այն է, որ դասական տրամաբանության մեջ, որպեսզի պնդումը, թե B-ն տրամաբանորեն հետևում է A-ից, ճշմարիտ ճանաչվի, անհրաժեշտ է և բավարար, որ ելնելով A և B ասույթների տրամաբանական կառուցվածքից, սովորական երկարժեք իմաստաբանության շրջանակներում, անկարելի լինի միևնույն պայմաններում A ասույթին վերագրել ճշմարիտ արժեք, իսկ B ասույթին՝ կեղծ։ Ինչ վերաբերում է ռելեվանտ տրամաբանությանը, ապա այստեղ նման պայմանը սոսկ անհրաժեշտ, բայց անբավարար է A-ի և B-ի միջև տրամաբանական հետևման համար, քանի որ այն կարող է կատարվել առանց այդ երկու ասույթների միջև որևէ բովանդակային կապի։ Ելնելով ասվածից, հեղինակը տալիս է տրամաբանական հետևման մասին պնդումների ճշմարտացիության նույնարժեք իմաստաբանական պայմանի հետևյալ սահմանումը. A→B պնդումը ռելեվանտ է միայն այն դեպքում, եթե A-ի ճշմարտացիության ցանկացած բավարար պայմանը B-ի ճշմարտացիության բավարար պայման է, և B-ի կեղծ լինելու ցանկացած բավարար պայմանը հանդիսանում է A-ի կեղծ լինելու բավարար պայման։

Եթե... ապա կապով և ինտենսիոնալ ձևով ըմբռնվող պայմանական ասույթը վերլուծելով, Ե. Սիդորենկոն բնութագրում է այն որպես միշտ կեղծ, եթե A-ն ճշմարիտ է, իսկ B-ն կեղծ, այսինքն, ամբողջ ասույթի և նախորդող ասույթի ճշմարտացիության դեպքում հաջորդող ասույթն անպայման ճշմարիտ է, իսկ ամբողջ ասույթի ճշմարտացի և հաջորդող ասույթի կեղծ լինելու դեպքում նախորդող ասույթը նույնպես կեղծ է։ Ասվածի լույսի տակ հեղինակը հանգամանորեն հետազոտում է հետևանքի ուժեղ և թույլ կողմերը[7]։

Ամփոփելով, կարելի է անել հետևյալ եզրակացությունը. տարբերությունը ուժեղ և թույլ իմպլիկացիաների միջև, մեր կարծիքով, նման է ուժեղ և թույլ իմաստաբանության միջև եղած տարբերությանը, որը համապատասխանում է Ու. Քուայնի կողմից մտցված նշանակության և վերաբերման տե-

---

[7] Տե՛ս Е. А. Сидоренко, Релевантность и импликации (Модальные и интенсиональные логики и их применение к проблемам методологии науки, М., 1984, с. 158—162, 166, 167, 178—180).

սությունների միջև գոյություն ունեցող տարբերությանը[8]։ Այն կարելի է բնութագրել որպես մոտեցմանը, բայց ոչ հետազոտման առարկային վերաբերող տարբերություն։

II. Իմպլիկացիան ճամալեզվաբանական վերլուծության տեսանկյունից

1. Լեզվաբանական իմպլիկացիայի հասկացությունը: *Իմպլիկացիայի հասկացությունը, որը լեզվաբանությունը փոխառել է տրամաբանությունից, նույնական չէ վերջինիս։ Դիտարկենք իմպլիկացիայի հասկացությունն այնպես, ինչպես ըմբռնվում է լեզվաբանության մեջ։*

Արդեն ասվել է, որ իմպլիկացիա տերմինը լեզվաբանության, ինչպես նաև տրամաբանության մեջ միանշանակ չի մեկնաբանվում. դրանց բազմազանությունը պայմանավորված է հեղինակների տարբեր կոնցեպցիաներով, նպատակադրումներով։ Իմպլիկացիայի պրոբլեմի բարդության պատճառներից մեկն էլ հենց տերմինաբանական այդ աններդաշնակությունն է լեզվաբանության շրջանակներում։ Իմպլիկացիա հասկացության մեջ են ընդգրկում ինչպես լեզվաբանական, այնպես էլ ոչ լեզվաբանական բնույթի տարբեր երևույթներ։ Ինչպես արդարացիորեն նշում է Ս. Դորոֆեևան, լեզվում իմպլիկացիայի տարբեր սահմանումները, որպես կանոն, ընդհանրացված ձևով իմպլիկացիան դիտարկում են որպես ձևի և բովանդակության միջև անզուգաշափության արտացոլում՝ եթե բավականաչափ լայն հասկանանք լեզվական նշանի անզուգաշափությունը։ Իմպլիցիտություն (ներակայություն), իմպլիկացիա, իմպլիկատիվ տերմինները հաճախ չմասնատված ձևով են գործածվում՝ նույնացվելով տարատեսակ կանխենթադրումներին, ենթատեքստին, իմաստաբանական բարդություններին և ենթադրման մյուս տեսակներին։ Չի կարելի չհամաձայնել հեղինակի հետ այն բանում, որ հետազոտման առարկան սահմանելիս հարկավոր է հստակ լեզվաբանական դիրքորոշում՝ խուսափելու համար տերմինի անօրինաչափ լայն կամ նեղ ըմբռնումից։ Այնուհետև Ս. Դորոֆեևան խոսում է իմպլիկացիա և ներակայություն հասկացությունների սահմանազատման անհրաժեշտության մասին. իմպլիկացիա և ներակայություն հասկացությունների նույնացումը անօրինաչափ է երկու պատճառներով։ Նախ, ընդհանուր առմամբ իմպլիկացիան շատ ավելի լայն հասկացություն է, որը, բացի զուտ լեզվաբանական կողմից, իր մեջ ներառում է նաև բազմաթիվ ուրիշ կողմեր (տրամաբանական, հոգեբանական և այլն), իսկ ներակայությունը, լինելով լեզվի օբյեկտիվ երևույթ, մտնում է այդ ընդհանուր կատեգորիայի մեջ՝ որպես բաղկացուցիչ։ Մյուս կողմից, եթե իմպլիկացիան դիտարկենք որպես զուտ լեզվական երևույթ, որը վերաբերում է լեզվաբանության իրավասությանը, և դրանով իսկ զգալիորեն նեղացնենք այդ հասկացության կիրառման ոլորտը, ապա այդ լեզվաբանական իմպլիկացիան, որպես օրգանական մաս, կմտնի ընդհանուր լեզվական ներակայության կազմի մեջ՝ ենթատեքստի, կանխենթադրման, զեղչման և ենթադրվող իմաստի կազմակերպման մյուս տեսակների կողքին[9]։ Իմպլիկացիա և ներակայություն հասկացությունների նույնացմանը հանդիպում ենք Ա. Բոնդարկոյի մոտ, որը իմպլիկացիա է համարում այն իմաստաբանական տարրերը, որոնք բերանացի կերպով արտահայտված չեն խոսողական ակտում, բայց բխում են արտասա լեզվական տարրերից[10]։ Սրան մոտ է նաև իմպլիկացիայի այնպիսի ըմբռնումը, որը սահմանվում է որպես «ենթաֆորմացիայի հաղորդման ոչ թե կրճատված, այլ ոչ բացահայտ արտահայտ-

---

[8] *Տե՛ս* W. O. Quine, From a Logical Point of View, Cambridge (Mass). 1953 p. 130.

[9] *Տե՛ս* С. М. Дорофеева, *նշվ. աշխ., էջ 45—46։*

[10] *Տե՛ս* А. В. Бондарко, Грамматическое значение и смысл, Л., 1978.

վածք, քողարկվածք, ենթադրվող միջոց»[11]։ Դրան համահնչուն է նաև իմպլիկացիա տերմինի այնպիսի ըմբռնումը լեզվաբանության մեջ, երբ այն «գործածվում է հիմնականում հատուկ բնույթի ենթադրում արտահայտելու համար...»[12]։

Լեզվաբանական իմպլիկացիան ավելի լայն էլ է մեկնաբանվում։ Օրինակ, Յա. Սլավինսկու աշխատանքում այն սահմանվում է որպես «բռնկում, որն առաջանում է մեկ լեզվական նշանի անսպասելի վերաիմաստավորմամբ՝ մյուսի համատեքստում։ Հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական կամ իմաստաբանական բռնկում, որը նշանները ձերբազատում է առօրեականության տիրապետությունից և ներկայացնում նոր լույսի տակ՝ բացահայտելով դրանց փոխադարձ ձգողականությունն ու վանողականությունը»[13]։ Յու. Ստեպանովը, խոսելով ժամանակի մյուս հնչույթաբանական տեսություններից Լ. Ելմսլևի տեսության տարբերության մասին, նշում է, որ վերջինիս բնորոշ է իմպլիկացիայի այնպիսի ըմբռնումը, որը ենթադրում է խոսքային շղթայի մեկ տարրի ծնունդը դրան հարևան մյուս տարրի կողմից։ Իմպլիկացիան ոչ այլ ինչ է, քան որոշակման գործառույթ տեքստի տարրերի միջև։ Ըստ Յու. Ստեպանովի, իմպլիկացիան բնորոշում է մեկ բազմությունը մյուսի մեջ մտցնելու հարաբերությունը[14]։ Կ. Լեմանը գրում է այն մասին, որ որևէ հատկանիշի առկայությունը լեզվական համակարգում ենթադրում է այդ նույն համակարգում մեկ ուրիշ հատկանիշի առկայությունը։ Եթե այդ կախվածությունը միակողմանի է, ապա ունենում ենք դրական իմպլիկացիա, եթե երկկողմանի է՝ համարժեքություն։ Որևէ հատկանիշի առկայությունը կարող է ենթադրել մեկ ուրիշ հատկանիշի բացակայությունը։ Եթե այդ կախվածությունը միակողմանի է, ապա գործ ունենք բացասական իմպլիկացիայի հետ, եթե երկկողմանի է՝ հակարժեքության կամ լրացուցիչ բաշխման[15]։

Իմպլիկացիա հասկացության՝ տրամաբանների մեկնությանը մոտ է Լ. Չախոյանը։ Նա իմպլիկացիա է համարում տրամաբանական այն գործողությունը, որը երե... ապա շաղկապով կապում է արտաքա կերպով արտահայտված երկու ասույթ[16]։ Ա. Գորյան իմպլիկացիան հասկանում է որպես հարաբերություն տարբեր գործառութային կարգավիճակ ունեցող երկու ասույթների միջև, այն է՝ նախորդող և հաջորդող ասույթների միջև այնպիսի հարաբերություն, որը համապատասխանում է բարդ ստորադասական նախադասությանը[17]։

Եթե փորձենք գտնել ընդհանուրը լեզվաբանական իմպլիկացիայի հասկացության տարբեր սահմանումների միջև, ապա կարող ենք ասել, որ տեր-

---

[11] А. С. Дари, Импликация, эллипсис и другие смежные явления (На материале современного французского языка), Кишинев, 1986, с. 3.

[12] П. Н. Донец, Импликативные высказывания в интеркоммуникации (Семантические и прагматические аспекты языковых и речевых структур: Тезисы докладов конференции молодых научных сотрудников и аспирантов, М., 1987, с. 33).

[13] Я. Славиньский, К теории поэтического языка (Структурализм: «за» и «против», М., 1975, с. 272).

[14] *Տե՛ս* Ю. С. Степанов, Методы и принципы современной лингвистики, М., 1975, с. 75, 288—289.

[15] *Տե՛ս* Ch. Lehmann. A Universal about Conditional Sentences (Linguistica Generalia I: Studies in Linguistic Typology. Philologica 5, Prague, 1977, p. 233).

[16] *Տե՛ս* Л. И. Чахоян, Синтаксис диалогической речи современного английского языка, М., 1979, с. 121.

[17] *Տե՛ս* А. Н. Горя, Импликация ирреальности в простом предложении (на материале английского языка) (Теоретические и прикладные исследования по романским и германским языкам. Романо-германская филология, Кишинев. 1985, с. 109).

մինի մեկնության ողջ անմիանշանակությամբ հանդերձ, առանցքում ընկած է այն, որ լեզվաբանական իմպլիկացիայի այս կամ այն մեկնության հիմքում դրված է իմպլիկացիան՝ ինչպես այն հասկացվում է տրամաբանության մեջ։

Լեզվաբանության մեջ իմպլիկացիա հասկացության բերված սահմանումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ այդ երևույթը դիտվում է ինչպես լեզվական, այնպես էլ խոսքային մակարդակներում։ Իմպլիկացիայի արտահայտման լեզվական մակարդակը դիտվում է, մասնավորապես, տիպաբանության մեջ, որը բացահայտում է լեզուների ինչպես հնչույթաբանական, այնպես էլ ձևաբանական կառուցվածքների հիմքում ընկած երևույթների կանխագուշակման օրենքները։ Հատկապես ուշագրավ ու բարդ է իմպլիկացիայի երևույթը խոսքային մակարդակում, խոսողական ակտում (այստեղ գոյություն ունեն ածանցվող իմպլիկացիայի տարբեր տեսակներ)։ Անուղղակի խոսողական ակտում, օրինակ, իմպլիկացիայի օգնությամբ արտահայտվում է հաղորդակցական նպատակադրումը։ Այդպիսի դեպքերում երբեմն իմպլիկացիա պարունակող նախադասությունները հիմք են դառնում լեզվի հետ կապվող կատակների, բառախաղերի գոյացման համար։

Լեզվաբանական իմպլիկացիային առնչվող հարցերի շրջանակի մեջ են մտնում տեքստային իմպլիկացիան, իմպլիկացիայի կապը ենթատեքստի հետ, զեղչման, իմպլիկատուրաների, քվազիիմպլիկացիաների և այլնի հետ։

2. **Տեքստային իմպլիկացիայի հասկացությունը։** Դիտարկենք տեքստային իմպլիկացիայի հասկացությունը։ Ի. Առնոլդն այն սահմանում է որպես լրացուցիչ ենթադրվող իմաստ (հաջորդող ասույթի կապին համապատասխանող), որը բխում է տեքստի համադրված միավորների (նախորդող ասույթին համապատասխանող) հարաբերակցությունից, սակայն բերանացիորեն արտահայտված չէ դրանցով։ Նշվում է նաև, որ տեքստային իմպլիկացիան պետք է ուսումնասիրվի ոչ թե մեկ նախադասության նյութի հիման վրա, այլ տեքստի ավելի խոշոր հատվածների[18]։ Ս. Կրաժեն կարծում է, որ տեքստային իմպլիկացիան ստեղծվում է ոճական համատեքստով, ուր կարևոր է համատեքստային կապերի ոչ թե նվազագույնը, այլ առավելագույնը[19]։ Տեքստային իմպլիկացիան պատահական երևույթ չէ տեքստում և սուբյեկտիվ բնույթ չի կրում, քանի որ մտնում է հաղորդակցման նպատակների մեջ։ Տեքստային իմպլիկացիան հարկ է տարբերակել ենթադրման մյուս տեսակներից (օրինակ, կանխենթադրումներից, ենթատեքստերից, իմպլիկացիոնալներից, զեղչումից և այլն)։

3. **Իմպլիկացիան և ենթատեքստը։** Խոսելով տեքստային իմպլիկացիայի և ենթատեքստի տարբերությունների մասին, Ս. Դորոֆեևան նկատում է, որ ենթադրման համակարգի հիերարխիայում ենթատեքստը գտնվում է բարձրագույն աստիճանի վրա, իսկ իմպլիկացիան տեքստում ծառայում է որպես ենթատեքստի ցուցիչ, հաճախ նաև՝ «կատալիզատոր»[20]։ Ի. Առնոլդը հետևյալ ձևով է նկարագրում այդ երկու երևույթների տարբերություններն ու ընդհանրությունները. «Ինչպես իմպլիկացիան, այնպես էլ ենթատեքստը բովանդակության լրացուցիչ խորություն են ստեղծում, բայց տարբեր չափերով... Ենթատեքստում այդ լրացուցիչ բովանդակությունը խորացնում է այս-

---

[18] *Տե՛ս* И. В. Арнольд, Импликация как прием построения текста и предмет филологического изучения (Вопросы языкознания, 1982, № 4, с. 84).

[19] *Տե՛ս* С. Г. Кража, Семантические отношения антецедента и консеквента в текстовой импликации [Лингвистические средства текстообразования (Межвузовский сборник). Барнаул, 1985, с. 69].

[20] *Տե՛ս* С. М. Дорофеева, *նույն աշխ.*, էջ 48։

ժեն, կրում է սեփական իմաստային գիծ, օգնում ստեղծագործության գլխավոր թեմաների առավել լրիվ բացահայտմանը: Տեքստային իմպլիկացիան արտացոլում է առանձին հաղորդակցման ակտի, արարքի կամ գործողության միջավայրը, որոնք կազմում են սյուժեի մի առանձին օղակ՝ դրվագ: Հաճախ դժվար է սահմանազատել ենթատեքստն ու իմպլիկացիան, քանի որ երկուսն էլ ենթադրման տարբերակներ են և հաճախ հանդիպում են միասին. միաժամանակ առկա լինելով տեքստում, նրանք համագործակցում են մեկը մյուսի հետ: Ենթատեքստի և տեքստային իմպլիկացիայի կարևոր ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ հարուցում են ընթերցողի զգայական ու գնահատող վերաբերմունքը շարադրյալի հանդեպ»[21]:

4. Իմպլիկացիան և զեղչումը: Ըստ Ի. Առնոլդի, ենթատեքստն ու տեքստային իմպլիկացիան իրենց նշանակմամբ էականորեն տարբերվում են զեղչումից. իմպլիկացիայի և զեղչման տարբերությունն այն է, որ եթե զեղչումը վերացնում է ավելցուկը և վերականգնվում է միանշանակորեն, ապա իմպլիկացիան կարող է տարբեր մեկնաբանություններ ունենալ[22]: Ա. Դարին տարբերակում է զեղչումը որպես զուտ խոսքային երևույթ, որը ենթադրում է ենթատեքստից բացակայող տարրերի լրացումը և իմպլիկացիան որպես երևույթ, որը հիմնված է արտակա ասույթից բխող որևէ նշանակության միջնորդավորված արտահայտման վրա[23]:

5. Իմպլիկատուրաների հասկացությունը: Հ. Գրայսի մտցրած խոսույթի իմպլիկատուրաները (conversational implicatures) ասույթի իմաստի այնպիսի տարրերն են, որոնք անմիջականորեն, ակնհայտ կերպով չեն մտնում նախադասության իմաստի մեջ, սակայն խոսողական ակտում դուրս են բերվում լսողի կողմից»: Ըստ Ե. Պադուչևայի, իմպլիկատուրաներն այն եզրակացություններն են, որոնց հանգում է լսողը, հաշվի առնելով ոչ միայն S նախադասության բուն բովանդակությունը, այլև այն հանգամանքը, որ խոսողը տվյալ իրավիճակում ընդհանրապես արտասանել է S նախադասությունը, և այն, որ S նախադասության փոխարեն խոսողը չի արտասանել որևէ այլ՝ S՛ նախադասություն: Խոսելով իմպլիկատուրաների հասկացության նշանակության մասին, Ե. Պադուչևան նշում է, որ այն հնարավորություն է տալիս «բևեռաթափելու» նախադասության և տեքստի իմաստաբանական նշանակությունը՝ դրանից հեռացնելով համահաղորդակցական ծագում ունեցող որոշ բաղկացուցիչներ: Խոսողական ակտի համատեքստում այս կամ այն ասույթից լսողի հասկացածը ամբողջությամբ չի մտնում նախադասության բուն իմաստի, այսինքն՝ որևէ բառի կամ կառուցվածքի իմաստի մեջ. բովանդակության որոշ տարրեր ոչ թե իմաստի մեջ են, այլ վերականգնվում են լսողի կողմից, ընդ որում՝ վերականգնվում են բավականաչափ միանշանակորեն, ելնելով համատեքստից և հաղորդակցական կանխադրույթներից[25]:

6. Իմպլիկացիան և քվազիիմպլիկացիան: Հարկ է տարբերակել նաև իմպլիկացիայի և քվազիիմպլիկացիայի հասկացությունները: Համաձայն Ի. Բելերտի սահմանման, $S_1 \rightarrow S_2$ իմպլիկացիայի դեպքում, եթե իմպլիկացիայի առաջին մասը ճիշտ է, ապա կարելի է եզրակացնել, որ իմպլիկացիայի երկրորդ մասը նույնպես ճիշտ է, իսկ քվազիիմպլիկացիայի դեպքում,

---

21 И. В. Арнольд, նշվ. աշխ., էջ 85:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 86:

23 Տե՛ս А. С. Дари, նշվ. աշխ., էջ 3—4:

24 Տե՛ս H. P. Grice, Logic and Conversation (Syntax and Semantics, New York, 1975, vol. 3, p. 41—58).

25 Е. В. Падучева. Высказывание и его соотнесенность с действительностью (Референциальные аспекты семантики местоимений), М., 1985, с. 42—43.

եթե առաջին մասը ճիշտ է օգտագործված ենղողի կողմից, ապա կարելի է եզրակացնել, որ իմպլիկացիայի երկրորդ մասը, որին վերագրվում է հղողի եղանակավորող դիրքորոշումը, ճիշտ է[26]: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը հղողի հայեցակետից իմպլիկացիայի օգտագործման ճշտության մասին է, այսինքն, այն դեպքերի մասին, երբ հղողը համոզված է իմպլիկացիայի ճշտության մեջ, մինչդեռ իրականում կարող է այդպես չլինել: Ցանուսը գրում է հասցեատիրոջ կողմից տեքստը հասկանալու նպատակով, այն է՝ դրա իմաստաբանական մեկնության նպատակով քվազիիմպլիկացիաների օգտագործման մասին, որոնք կարող են լիովին չհամընկնել հղողի իմպլիկացիաներին[27]:

7. **Կանխենթադրման հասկացությունը:** Իմպլիկացիային մոտ է կանխենթադրման հույժ կարևոր հասկացությունը, որը լեզվաբանությունը նույնպես փոխառել է տրամաբանությունից: Կանխենթադրումների հատկանիշներից մեկն այն է, որ գա նախադասության ենթադրյալ իմաստաբանական բաղկացուցիչներից է, որը նախադասության մեջ արտահայտված չէ բավականաչափ արտակա կերպով: Մեր առջև չդնելով կանխենթադրումների տարբեր տեսակները հանգամանորեն վերլուծելու խնդիր, հպանցիկ դիտարկենք դրանք:

Էկզիստենցիալ կանխենթադրումներ: Ըստ Ֆ. Կիֆերի, էկզիստենցիալ կանխենթադրումները կարող են ենթադրել ոչ միայն վերաբերյալի (ռեֆերենտի), այլև փաստի առկայությունը: Նա բերում է հետևյալ օրինակները՝

	realizes	that		հասկանում է, որ
John	knows	Lena	Ջոնը գիտի,	Լենան
	remembers	loved		իրեն
		him	հիշում է,	սիրում էր,
		realize		հասկանում,
John	does not	know	Ջոնը չի գիտի,	որ Լենան
		remember	(չ) հիշում.	իրեն սիրում էր:

«Լենան իրեն սիրում էր» կանխենթադրությամբ: Այստեղ ենթադրվում է ոմն փաստի առկայությունը, մասնավորապես, որ «Լենան իրեն սիրում էր»[28]:

Ե. Պադուչևան գրում է, որ ամեն մի հատուկ անվան հետ կապված է համապատասխան օբյեկտի գոյության և եզակիության կանխենթադրումը. (ընդ որում, դա կարող է վերաբերել գոյությանը խոսքի ոլորտում, օրինակ, որևէ մտացածին աշխարհին, որը, սակայն, իրական է դիտվում տվյալ խոսողական ակտի ընթացքում)[29]: Համեմատենք Ի. Բելերտի նմանիմաստ արտահայտության հետ. «...գոյաբանական դատողությունները կարող են ընդհանրապես հաշվի չառնվել առանձին ասույթների կառուցվածքի տրամաբանական-իմաստաբանական նկարագրության ժամանակ, քանի որ բնական լեզվի ասույթները նկարագրում են իրապես գոյություն ունեցող իրավիճակներն ու օբյեկտները: Հետևաբար, «Ցանը ուսանող-մաթեմատիկոս էր» նա-

---

[26] Տե՛ս И. Беллерт, Об одном условии связности текста (Новое в зарубежной лингвистике, М., 1978, вып. 8, с. 178).

[27] Տե՛ս Э. Янус, Обзор польских работ по структуре текста (Синтаксис текста, М., 1979, с. 327).

[28] Տե՛ս Ф. Кифер, О пресуппозициях (Новое в зарубежной лингвистике, М., 1978, вып. 8, с. 337).

[29] Տե՛ս Е. В. Падучева, նշվ. աշխ., էջ 69:

խոսքի տրամաբանական-իմաստաբանական կառուցվածքը կախված չէ այն բանից, թե նախադասությունը որտեղ է հանդես գալիս, սովորական զրույցում թե վեպում, Յանը իսկապես գոյություն ունեցող անձնավորություն է, թե վեպի հերոս։ Երկու դեպքում էլ «Յան» դասիչի գործածումը բխեցնում է խոսողի կամ հեղինակի դատողությունը կամ ենթադրությունը, թե գոյություն ունի միակ «օբյեկտ», որի մասին է խոսքը տվյալ պահին՝ անկախ այն բանից, այդ «օբյեկտը» գոյություն ունի իրականում թե վեպում, ուր նրա գոյությունը միայն ենթադրվում է»[30]։

Պետք է ասել, որ էկզիստենցիալ կանխենթադրումների վերլուծությունը կապված է որոշակի դժվարությունների հետ, այն իմաստով, որ գոյություն ունի ասույթների որոշակի շրջանակ, ուր թույլատրվում են տարբեր մեկնություններ։ Այդպիսի ասույթներից մեկը, մասնավորապես, Բ. Ռասելի հայտնի օրինակն է. "The king of France is bald" («Ֆրանսիայի թագավորը ճաղատ է»), որը բովանդակում է "There is a king of France" («Գոյություն ունի Ֆրանսիայի թագավոր») էկզիստենցիալ կանխենթադրումը։ Վերլուծելով այն, Դ. Նութը վկայակոչում է Փ. Սթրոուսոնի կարծիքը, որը կարծում է, թե սխալ է նման կանխենթադրումներ անելը, եթե դրանից բխեցնենք, որ "There is a king of France" ասույթի կեղծ լինելուց բխում է նաև "The king of France is bald" ասույթի կեղծությունը, ինչպես առաջարկում է Բ. Ռասելը։ Դրա փոխարեն, ըստ Փ. Սթրոուսոնի, "There is a king of France" ասույթի կեղծությունից բխում է, որ "The king of France is bald" ասույթն առհասարակ ճշմարտացիության արժեք չունի։ Այստեղից Դ. Նութը առաջադրում է այն կարծիքը, որ էկզիստենցիալ կանխենթադրումների նման դնահատականը կիրարկելի է միայն այն բաների նկատմամբ, որոնք որոշակի հանգամանքներում կարող են ունենալ ճշմարտացիության արժեք։ Դ. Նութը բերում է հետևյալ օրինակը. Երբ առաջին տիեզերանավը իջավ Լուսնի վրա, Արմսթրոնգը "Eagle has landed" [«Արծիվը (հավանաբար, նկատի ունենալով ԱՄՆ-ի զինանշանն ու խորհրդանշանը—Լ. Բ.) վայրէջք կատարեց»] դարձվածի փոխարեն կարող էր արտասանել "America is on the moon" («Ամերիկան Լուսնի վրա է») դարձվածը։ Արմսթրոնգի "America is on the moon" դարձվածը սոսկ հնարավոր ասույթ է (possible utterance), մինչդեռ "Eagle has landed" իրական ասույթ է (actual utterance)։ Երկու ասույթներն էլ ունեն որոշակի էկզիստենցիալ կանխենթադրումներ և ճշմարտացիության արժեքներ։ Սակայն Դ. Նութը կարծում է, որ ոչ բոլոր ասույթներն ունեն ճշմարտացիության արժեքներ, և եթե ընդունենք, որ Փ. Սթրոուսոնը իրավացի է, ապա "The king of France is bald" նախադասության ժամանակակից արտաբերումը կլինի մի այնպիսի ասույթի օրինակ, որը ոչ ճշմարիտ է, ոչ կեղծ[31]։

Գործորոշական կանխենթադրումներ։ Գործորոշության զարգացումը հանգեցրեց գործորոշական կանխենթադրումների նոր հասկացության առաջացմանը։ Գործորոշական կանխենթադրումները բազմաթիվ տրամաբանների ուսումնասիրության առարկա են։ Կանխենթադրումների այս տեսակը, ինչպես և գործորոշությունն ընդհանուր առմամբ, արտահայտում է խոսողի դիրքորոշումը, նրա վերաբերմունքը ասվածի նկատմամբ։ Ըստ Ե. Պադուչևայի, գործորոշական կանխենթադրումը կանխավարկած է լսողի գիտելիքների վերաբերյալ, և այդ իմաստով այն գործորոշական է[32]։

---

[30] Ի. Բելլերտ, նշվ. աշխ., էջ 189։

[31] Տե՛ս D. Nute, Logical Relations (Philosophical Studies, 1984, vol. 46, № 1 p. 44).

[32] Տե՛ս Е. В. Падучева, նշվ. աշխ., էջ 57։

Գործորոշական կանխենթադրումների դեպքերը ցուցադրելու համար օգտվենք հետևյալ ասույթներից. ասույթներ, որոնք արտացոլում են, օրինակ, բարոյական կանոնների խախտումները. համմտ. «Նա ոտքի չելավ, երբ վագոն մտավ տարեց մի կին»⟶ «Նա անդաստիարակ մարդ է»; նախապաշարմունքների, նախանշանների հետ կապված ասույթներ. համմտ. «Ճանապարհը կտրեց մի սև կատու»⟶«Հնարավոր են տհաճ իրադարձություններ», ասույթներ, որոնք բովանդակում են «սոցիալական կարգավիճակի խորհրդանիշներ». համմտ. «Նա «Վոլգա-24» ունի» ⟶ «Նա ունևոր մարդ է»:

Բառային կանխենթադրումներ: Բառային կանխենթադրումները, ինչպես ակնհայտ է այդ հասկացության անվանումից, բխեցվում են հենց բառային միավորից, և դրանով էլ տարբերվում են կանխենթադրումների մյուս տեսակներից: Այսպես, Ֆ. Կիֆերը սահմանազատում է բառային կանխենթադրումները ոչ-բառայիններից: Նա բառային է կոչում այն կանխենթադրումները, որոնք ելնում են բառային միավորներից, իսկ ոչ-բառային՝ այնպիսի կանխենթադրումները, որոնք չեն կազմում առանձին բառային միավորների նշանակության մաս, բայց ողջ կանխադրության արդյունքն են: Յուրաքանչյուր բառային միավորի նշանակությունը, ըստ նրա, բաղկացած է երկու մասից. բառի իրական նշանակությունից և դրա կանխենթադրական նշանակությունից: Բառային կանխենթադրումների շրջանակներում տարբերակվում են ընդհանուր կանխենթադրումները և բնորոշող կամ մասնավոր (idiosyncratic) կանխենթադրումները: Վերջիններս համապատասխան միավորի բառային ներկայացման մասն են, իսկ ընդհանուր կանխենթադրումները պատկանում են լեզվի բառապաշարի հետ գործ ունեցող իմաստաբանության սահմանումներին: Որպես մասնավոր բառային կանխենթադրման դուրս բերման օրինակ Ֆ. Կիֆերը բերում է bachelor (ամուրի) բառի մեկնությունը,

bachelor (X)
. . . . . .
Ma : U : (X)
Pre : M (X) ∧ A (X),

որտեղ՝ U-չամուսնացած, M-արական սեռի, A-մեծահասակ, Ma-հաստատման նշանակություն, իսկ Pre-կանխենթադրման նշանակություն: Ընդհանուր կանխենթադրումն այստեղ հետևյալն է. H(x), ուր՝ H-մարդ է[33]:

8. Բառային կոնվերսիվների հասկացությունը: Կանխենթադրումների հասկացությանը մոտ է բառային կոնվերսիվների հասկացությունը: Բառային կոնվերսիվները համոզիչ նկարագրել է Յու. Ապրեսյանը: Հեղինակի հետ չի կարելի չհամաձայնել այն բանում, որ բառային կոնվերսիվները կոչված են հաղորդելու տրամաբանական շեշտի տարբերություններ: Այս դրույթը լուսաբանելու համար նա բերում է «Առաջին կարգայինը հաղթեց Չեմպիոնին» նախադասությունը, որը փաստերի առանձնացման հայեցակետից այլ կերպ է մեկնաբանվում, քան «Չեմպիոնը պարտվեց առաջին կարգայինին» նախադասությունը[34]: Շատ հիմնավորված է, ըստ մեզ, կոնվերսիվներից մեկի՝ Յու. Ապրեսյանի վերլուծությունը. «*A*-ն ավելի երկար ապրեց, քան *B*-ն (=A-ն ավելի ուշ մահացավ, քան B-ն, և A-ի և B-ի կյանքերը մասնակիորեն համընկել են, ըստ ժամանակի, և A-ն և B-ն կապված էին սոցիալական կամ արենակցական կապերով) և *B*-ն ավելի շուտ մահացավ, քան *A*-ն» ասույթների միջև տարբերությունների չեզոքացումը տեղ ունի այն դեպքում, երբ «A-ի և B-ի կյանքերի ժամանակի առումով մասնակի համընկնումը և

---

33 Տե՛ս Ֆ. Կիֆեր, նշվ. աշխ., էջ 345—346:

34 Տե՛ս Ю. Д. Апресян, Лексическая семантика (синонимические средства языка), М., 1974, с. 257.

սոցիալական կամ արենակցական կապվածությունը» կամ արտահայտված է, կամ բխեցվում է։ Այդ ինֆորմացիան կարող է բխել անմիջականորեն որոշ բառերի բառարանային սահմանումներից, օրինակ՝ ամուսին և կին գոյականների, և եթե դրանք գրավեն A-ի և B-ի տեղերը, չեզոքացումն ակընհայտ կլինի. Կանայք սովորաբար ավելի երկար են ապրում, քան նրանց ամուսինները—Ամուսինները սովորաբար ավելի շուտ են մեռնում, քան նրանց կանայք։ Եթե, սակայն, A-ն և B-ն գրողներ են, պատմական գործիչներ և այլն, ապա չեզոքացման (և B-ն ավելի շուտ մահացավ, քան A-ն ասույթը A-ն ավելի երկար ապրեց, քան B-ն ասույթով փոխարինելու) հնարավոր կամ անհնար լինելը որոշվում է ոչ թե լեզվական ինֆորմացիայով, այլ իրական իրադրության իմացությամբ։ Մասնավորապես, ծանոթ լինելով գիտության պատմությանը, մենք կարող ենք ասել, թե Գալուան մահացել է զգալիորեն ավելի շուտ, քան Մաքսվելը (կամ Մայքլսոնը), սակայն չենք կարող ասել, որ Մաքսվելը (կամ Մայքլսոնը) զգալիորեն ավելի երկար ապրեց, քան Գալուան»[35]։

9. Կառուզատիվների հասկացությունը։ Իմպլիկատիվ հարաբերությունների վերլուծության հայեցակետից հետաքրքիր է նաև կառուզատիվների հասկացությունը։ Ե. Պադուչևան վերլուծում է այնպիսի «իմպլիկատիվ բայեր», ինչպիսիք են, օրինակ, հաջողվեց, համարձակվեց, չմոռացավ, ճոգ տարավ և այլն, որոնք ունեն այն հատկությունը, որ եթե ճշմարիտ է S նախադասությունը, ասենք, «Ջոնին հաջողվեց P-ն» (ուր P-ն հաջողվեց բայի պրեդիկատային ակտանտն է), ապա տեղ ունի P-ն, իսկ եթե S-ը կեղծ է, ապա տեղ ունի ⌝P-ն։ Այսինքն՝ S-ը հարկադրում է P-ին, իսկ ⌝S-ը հարկադրում է ⌝P-ին։ Այսպես, Իվանին հաջողվեց ուղարկել ծաղրոցը ⊃ Իվանը ուղարկեց ծաղրոցը, Իվանին չհաջողվեց ուղարկել ծաղրոցը, Իվանը չուղարկեց ծաղրոցը։ Տարբերակվում են նաև «բացասական իմպլիկացիայի բայերը», ինչպես, օրինակ, մոռացավ, չկարողացավ և այլն, որոնք, ինչպես նկատում է, օժտված են այն հատկանիշով, որ S-ը հարկադրում է ⌝P, իսկ ⌝S-ը՝ P (օրինակները. Նա մոռացավ փակել դուռը ⊃ Դուռը փակ չէ, Նա չմոռացավ փակել դուռը ⊃ Դուռը փակ է)[36]։

10. Հետևության հասկացությունը։ Խիստ կարևորվում է հետևության հասկացությունը։ Դրա ուսումնասիրությունը կապված է այն հարցի հետ, թե ինչի հիման վրա են արվում հետևությունը (իմպլիկացիաները, եզրակացությունները և այլն)։ Այս առնչությամբ Ի. Բելերտը սահմանում է հետևյալ երկու կանոնը. 1) լեզվի նկարագրության մեջ մտածները և 2)աշխարհի մասին գիտելիքների վրա հիմնվածները։ Լրացուցիչ կանոնը նախադասության ճիշտ օգտագործման պայմանն է։ Վերջինս ենթադրում է, որ հղողը ճիշտ է օգտագործել նախադասությունը՝ համապատասխան սովյալ լեզվի կանոններին և համապատասխան նրան, թե ինչ էր ուզում արտահայտել։ Այդ կապակցությամբ նա գրում է, որ այն բազմաթիվ հետևությունները, որոնց հանդում ենք կապակցված տեքստը մեկնաբանելիս, բովանդակում են ոչ միայն այնպիսի դատողություններ, որոնք կարելի է դուրս բերել նախորդող ասույթների և լեզվի կանոնների հիման վրա, այլև դատողություններ, որոնք որպես լրացուցիչ պայման պահանջում են աշխարհի մասին գիտելիքներին վերաբերող դատողություններ։ Հետևությունները տարբերակվում են ըստ այն բանի,

---

35 Նույն տեղում, էջ 160։

36 Տե՛ս Е. В. Падучева, նշվ. աշխ., էջ 62, 71։

թե ո՛ր կանոնի հիման վրա են արված։ Սակայն հետևությունների երկու տեսակների միջև եղած տարբերությունը էական չէ՝ տեքստի կապակցվածության գործում նրանց կատարած դերի տեսանկյունից[37]։

Այժմ ավելի հանգամանորեն դիտարկենք հետևությունների տարբեր տեսակները՝ հիմնված դրանց բխեցման տարբեր կանոնների վրա։ Լեզվի իմացության վրա հիմնված հետևությունները սկզբունքային դեր են կատարում հաղորդման մեկնության գործում։ Դրանք ասույթի իմաստաբանական մեկնություններն են։

Աշխարհի մասին գիտելիքների վրա հիմնված հետևությունները լուսաբանելու համար բերենք Յու. Ապրեսյանի գրքից վերցված հետևյալ օրինակը. «Եթե օրինակ, տեքստի տվյալ տեղում ասվում է. Իացատում խարույկ է վառվում, կարող ենք եզրակացնել, որ 1) որոշ ժամանակ առաջ ոմն անձնավորություն այն վառել է որոշակի՝ ասենք, սնունդ պատրաստելու, նպատակով, 2) որ բացատում խարույկի շուրջը համեմատաբար լուսավոր է, և կարելի է տեսնել շրջապատի առարկաները, համեմատաբար տաք է և կարելի է տաքանալ և այլն։ Հետևաբար, ծանոթանալով տեքստին նախորդող և հաջորդող հատվածներին, չենք զարմանա, եթե հանդիպենք խարույկը վառած անձնավորության անվանը, կամ պատրաստված կերակրի անվանմանը, կամ կարդանք, որ սառած մարդիկ հավաքվել էին խարույկի շուրջը և այլն»[38]։ Սակայն, այս բնույթի հետևությունների մասին խոսելիս հարկ է հիշել՝ աշխարհի մասին գիտելիքներով պայմանավորված տեքստերի մեկնությունը անմատչելի է այն հասցեատերերի համար, որոնք չունեն խոսողի ենթադրած մակարդակի գիտելիքներ աշխարհի մասին։ Նման տեքստի կրած բովանդակությունը համարժեք կերպով մեկնելու անընդունակ հասցեատերը չի ստանում հղողի մտահղացմանը համապատասխանող հաղորդումներ և սխալ է մեկնում այդ տեքստը։ Հետևությունների այդ տեսակը ուշագրավ է այն առումով, որ երբեմն հասցեատերը դրանք կարող է բխեցնել նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ դրանք չեն եղել հղողի մտահղացման մեջ։ Այս առընչությամբ Ի. Բելերտը միանգամայն արդարացիորեն նշում է, որ նման եզրակացությունների՝ որպես հղողի դատողությունների, բխեցումը միշտ չէ, որ հիմնավորված է, քանի որ դրանք կարող են լինել նաև զուտ հասցեատիրոջ եզրակացությունները։ Բացատրվում է դա հետևյալ կերպ. հասցեատիրոջ գիտելիքները աշխարհի մասին կարող են ավելի լայն լինել, քան հղողինը, և այդ դեպքում նա կարող է ավելի շատ դատողություններ բխեցնել տվյալ ասույթից, քան մտահղացել է հղողը[39]։ Հետևությունների երկու տեսակների՝ լեզվի իմացության վրա հիմնված հետևությունների և աշխարհի մասին գիտելիքների վրա հիմնված հետևությունների, յուրատեսակ զուգորդման օրինակ կարող է ծառայել Փ. Սուպեսից փոխառնված հետևյալ ասույթը. "If there are approximately one hundred million husbands in the United States. then there are approximately one hundred million wives in the United States" (*«Եթե Միացյալ Նահանգներում կա մոտ մեկ միլիոն ամուսին, ապա Միացյալ Նահանգներում կա մոտ մեկ միլիոն կին»*)[40]։ Եթե husband (*ամուսին*) բառից իմաստաբանորեն հետևում է wife (*կին*) բառը, ապա one million (*մեկ միլիոն*)-ի դեպքում նման իմաստաբանական հետևում տեղի չի ունենում։ Միայն ամուսին բառի առկայության դեպքում է մեկ միլիոն ամուսին բառակապակցությունից բխում մեկ միլիոն կին բառակապակցությունը, և այստեղ հետևությունը բխեցվում է աշխարհի մասին դիտելիքների հիման վրա։

---

37 И. Беллерт, *նշվ. աշխ., էջ 176—177, 181, 195—196.*

38 Ю. Д. Апресян. *նշվ. աշխ., էջ 40։*

39 *Տե՛ս* И. Беллерт, *նշվ. աշխ., էջ 181։*

40 P. Suppes. *Նշվ. աշխ., էջ 7։*

11. Կանխենթադրումները և հետևությունները: Կանխենթադրումների և հետևությունների բոլոր ընդհանրություններով հանդերձ, հարկ է սահմանազատել այդ երկու հասկացությունները: Ըստ Տ. Նիկոլաևայի, ասույթը կարող է կազմված լինել այնպիսի տարաբնույթ բաղկացուցիչներից, ինչպես կանխենթադրումները, որոնք կասկած չհարուցող ելակետային դրույթներ են, և հետևությունները, որոնք լրացուցիչ հաղորդումներ են: Նա բերում է օրինակներ, երբ ասույթից բխեցվում են տարբեր հետևություններ (ընդ որում, հետևությունները միշտ չէ, որ բխեցվում են, և հակառակը՝ հնարավոր է մեկ ասույթից մի քանի հետևությունների բխեցումը): Հեղինակը նշում է, որ հետևությունները կանխենթադրումներից տարբերվում են վերջիններիս անփոփոխությամբ, համատեքստից անկախ լինելով: Տ. Նիկոլաևան ցույց է տալիս, որ մեկ ասույթից բխեցվող հետևությունների թիվը գնալով աճում է: Օրինակ, "You' ve eaten all my apples" («Դու կերար բոլոր խնձորներս») բառակապակցությունից բխեցվում է 10 հետևություն, որոնցից վերջինը հետևյալն է. "Something has happened" («Ինչ-որ բան է պատահել»): Նշելով, որ նույն ասույթից բխեցվող հետևությունները միշտ չէ, որ միանշանակ են հասկացվում (այդ մասին արդեն խոսել ենք), նա բերում է հետևյալ օրինակը. "Brigitte Bardot is only pretty" («Բրիջիտ Բարդոն սոսկ լավիկն է»), որը կարելի է երկակի ընկալել. «Բրիջիտ Բարդոն գեղեցկուհի չէ, բայց լավիկն է» կամ «Բրիջիտ Բարդոն լավիկն է, բայց խելոք չէ»[41]:

Ե. Պադուչևան նշում է, որ հետևությունների և կանխենթադրումների տարբերությունը ցայտուն է ֆազիսային բայերի օրինակով, որոնց իմաստաբանական առանձնահատկությունն այն է, որ դրանց կանխենթադրումը նկարագրում է անցյալում տեղի ունեցած որևէ իրադարձություն, իսկ հետևությունը վերաբերում է ապագա իրադարձությանը: Ասվածը լուսաբանվում է հետևյալ օրինակի օգնությամբ. «Ժամը երկուսին Ջոնը սկսեց աշխատել», որի կանխենթադրումն է. «Մինչև երկուսը որոշակի պահին Ջոնը չէր աշխատում», իսկ հետևությունը՝ «Երկուսից անց որոշակի պահին Ջոնը աշխատում էր»[42]:

Ընդափակելով լեզվաբանական իմպլիկացիային առնչվող հարցերի մեկնաբանությունը, ընդհանրացված ձևով կարելի է ասել, որ լեզվաբանական իմպլիկացիայի տարատեսակները չի կարելի նույնացնել. դրանցից յուրաքանչյուրն ունի իր յուրահատկությունները, սակայն դրա հետ մեկտեղ ենթադրվողը, բխեցվողը բացահայտող գործողության մեխանիզմը ընդհանուր է:

ПОНЯТИЕ ИМПЛИКАЦИИ В ЛОГИКЕ И В ЛИНГВИСТИКЕ

Л. Г. БРУТЯН

Резюме

Понятие импликации, проникшее из логики в лингвистику, понимается неоднозначно не только в этих науках, но и внутри них. При сопоставлении импликации в классической логике (материальная импликация и формальная импликация) и импликации в логике в нетрадиционном понимании с импликацией в лингвистике наблюдается следующее. При всем разнообразии интерпретаций понятия лингвистической импликации общим между ними является то, что в основе той или иной интерпретации лежит понятие импликации, как оно пони-

41 Տե՛ս Т. М. Николаева, Функции частиц в высказывании (на материале славянских языков), М., 1985, с. 82.

42 Տե՛ս Е. В. Падучева, նշվ. աշխ., էջ 61:

мается в логике. Разновидностями лингвистической импликации являются текстовая импликация, подтекст, эллипсис, импликатуры, пресупозицин, следствия и др. Каждая из этих разновидностей имеет свои специфические особенности, но при этом у них общий механизм действия, вскрывающий все имплицитное, подразумеваемое.

THE CONCEPT OF IMPLICATION IN LOGIC AND IN LINGUISTICS

L. G. BRUTIAN

S u m m a r y

The concept of implication which has penetrated linguistics from logic is understood in different ways not only in these sciences but also inside them.

Comparing implication in classical logic (material and formal implication) and implication in non—traditional logic with implication in linguistics we notice the following. With all the diversity of interpretations of the concept of linguistic implication the common thing for all of them is that in the base of this or that interpretation there is the concept of implication in the logical sense. The varieties of linguistic implication are textual implication, subtext, ellipsis, implicatures, presuppositions and others. Each of them has its specific features, and at the same time they all have a common mechanism of acting which reveals everything implied and supposed.